ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-26/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «22» ապրիլի 2026թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արշակ Վարդապետյան՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալ

հանձնաժողովի անդամներ՝

Արուս Հայրապետյան՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալ

Աննա Չերքեզյան՝ Դատական դեպարտամենտի ֆինանսաբյուջետային վարչության գլխավոր մասնագետ

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-26/04» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 10-րդ օրվա (20.04.2026թ.)՝ ժամը 15:00-ն,
- հայտը բացվել է էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 21.04.2026թ.՝ ժամը 15:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայության գնման գնի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գնման գինը.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)
1	Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի ներքին աուդիտի ծառայություն	3288000

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
Քրոու Արմենիա ՍՊԸ	Արգիշտի 7, Դոմ Մոսկվի, ք. Երևան, ՀՀ

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-26/04» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ	Գին (ՀՀ դրամ)	Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ	Գին (ՀՀ դրամ)	
1	Քրոու Արմենիա ՍՊԸ	22000000	20%	26400000	21000000	20%	25200000.00	Մերժված

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 21.04.2026թ.՝ ժամը 15:30-ին:

7. Տվյալներ՝ մերժված հայտի և «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-26/04» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ.

Քրոու Արմենիա ՍՊԸ-ի աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գինը գերազանցել է սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության համար գնման հայտով սահմանված գնման գինը, ուստի հիշյալ մասնակցի կողմից ներկայացված հայտը Համակարգի կողմից համարվել է մերժված:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-26/04» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արշակ Վարդապետյան

Անդամներ՝ _____ Արուս Հայրապետյան

_____ Աննա Չերքեզյան

_____ Արթուր Ասատրյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան